

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

«___» _____ 2018 թվական

N ___-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի
N 135-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 135-Ն որոշման հավելվածի՝

1) 10-րդ կետի 4-րդ սյունակում «Երրորդ եռամսյակ» բառերը փոխարինել «Չորրորդ եռամսյակ» բառերով,

2) ուժը կորցրած ճանաչել 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 135-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p align="center">Ընթացիկ իրավիճակը և անհրաժեշտությունը</p>
	<p>Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի N 135-Ն որոշմամբ Արցախի Հանրապետության կառավարության կողմից ի կատարումն ընդունվել է Արցախի Հանրապետության Նախագահի 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը, որի 10-րդ կետի համաձայն, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը 2018 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը պետք է ներկայացնեք «Նոտարիատի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը, 14-րդ և 15-րդ կետերի համաձայն՝ չորրորդ եռամսյակում՝ համապատասխանաբար «Տեղեկատվության ազատության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերը:</p>
2.	<p align="center">Առաջարկվող կարգավորման բնույթը</p>
	<p>«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի N 135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծով առաջարկվում է Արցախի Հանրապետության Նախագահի 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 10-րդ կետի 4-րդ սյունակում «Երրորդ եռամսյակ» բառերը փոխարինել «Չորրորդ եռամսյակ» բառերով, քանի որ «Նոտարիատի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծի մշակման համար անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ մեծածավալ ուսումնասիրություններ նախագծով առաջարկվող առանձին կարգավորումների վերաբերյալ:</p> <p>Նախագծով առաջարկվում է նաև ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության Նախագահի 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 14-րդ և 15-րդ կետերը, պայմանավորված այն հանգամանքով, որ նշված կետերով նախատեսված՝ «Տեղեկատվության ազատության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Անձնական տվյալների</p>

	<p>պաշտպանության մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերը Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհրդին ներկայացնելու ժամկետը հետաձգվել է խորհրդի որոշմամբ (նախագծերը պետք է ներկայացվեին մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1):</p> <p>Ծրագրի 16-րդ կետով նախատեսված «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայումս գտնվում է նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից քննարկման և մշակման փուլում: Ուստի նախագիծը կընդգրկվի հաջորդ տարվա ծրագրում:</p>
3.	Ակնկալվող արդյունքը
	<p>Նախագծի ընդունմամբ ակնկալվում է Արցախի Հանրապետության Նախագահի 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված ժամկետները հստակեցնել և համապատասխանեցնել առկա իրավիճակին:</p>
4.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	<p>Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:</p>